

2020 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Բովանդակություն

1. Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով	04
Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները	06
Բանկի ձեռքբերումները	07
Բանկը որպես հաշվետու թողարկող	08

2. Ռազմավարական հաշվետվություն

Խորհրդի նախագահի ուղերձ	10
Վարչության նախագահի ուղերձ	11
ՀՀ տնտեսությունը	12
Մեր ռազմավարությունը և արդյունքները	14
Ֆինանսական արդյունքներ	20
Մեր անձնակազմը	23

3. Կորպորատիվ կառավարում

Մեր բաժնետերերը և խորհուրդը	27
Ռիսկերի կառավարում	28

4. Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	32
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	32
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	33
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	33

Պատասխանատու անձանց հայտարարություն



Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով	04
Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները	06
Բանկի ձեռքբերումները	07
Բանկը որպես հաշվետու թողարկող	08

IDBank-ը մեկ հայացքով

IDBank-ը Հայաստանի նորարար զարգացող բանկերից մեկն է և արդեն 31-ամյա գործունեության փորձ ունի բանկային համակարգում: Բանկը, հավատարիմ մնալով իր առաքելությանը և ռազմավարական առաջնահերթություններին, իր հաճախորդներին առաջարկում է նորարարական թվային լուծումներ՝ մատուցելով նրանց անվտանգ, ապահով և էլ ավելի հարմարավետ ծառայություններ:

IDBank-ը ունիվերսալ բանկ է. թե՛ իրավաբանական, թե՛ ֆիզիկական անձանց առաջարկում է ամբողջական ծառայությունների փաթեթ՝ շուկայում գործող մրցակցային պայմաններով:

Որպես նորարարության վրա հիմնված կառույց՝ Բանկն առաջարկում է լայն ծառայությունների շրջանակով թվային հարթակ: Հաճախորդները կարող են օգտվել հեռահար նույնականացման հնարավորությունից, դիմել նոր վարկային, քարտային պրոդուկտների համար, փոխանցումներ ստանալ, կառավարել իրենց ֆինանսները առանց բանկ այցելելու՝ ցանկացած վայրում, ցանկացած պահին:

IDBank-ը շարունակում է ընդլայնել ներդրումները տեխնոլոգիաների ոլորտում՝ ստեղծելով հաճախորդակետորոն Էկոհամակարգ:

1990թ. օգոստոս
Բանկի հիմնադրում

2016թ. դեկտեմբեր
Բանկի կողմից առաջին անգամ պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում

2018թ. հոկտեմբեր
Idram - IDBank համատեղ թվային հարթակի գործարկում

2020թ. հուլիս
Rocket Line հեղափոխական ապառիկի գործարկում

2020թ. դեկտեմբեր
Թվային հարթակից օգտվող հաճախորդների թվաքանակի մոտ 400% տարեկան աճ

2007թ. փետրվար
Moody's ընկերության կողմից առաջին անգամ՝ միջազգային վարկանիշի ստացում

2018թ. հունիս
«Անելիք Բանկ» ՓԲԸ-ի վերանվանում «Այդի Բանկ» ՓԲԸ-ի

2019թ. հոկտեմբեր
Ավելի քան 100,000 թողարկված քարտեր

2020թ. դեկտեմբեր
Քարտերով գործարքների մոտ 150% տարեկան աճ

2020թ. դեկտեմբեր
Ավելի քան 300,000 հաճախորդ

IDBank-ը մեկ հայացքով

Ֆինանսական ցուցանիշներ

Մանրածախ վարկային պորտֆել
ՀՀ դրամ

52,8 մլրդ

↑ +23.9% տարեկան

Կորպորատիվ վարկային պորտֆել
ՀՀ դրամ

53,9 մլրդ

↑ +17.9% տարեկան

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և
ավանդներ ՀՀ դրամ

66,8 մլրդ

↑ +13.5% տարեկան

Ընդհանուր կապիտալ, ՀՀ դրամ

44,3 մլրդ

↑ +1.6% տարեկան

Զուտ շահույթ, ՀՀ դրամ

1,2 մլրդ

↓ -54.2% տարեկան

Զուտ տոկոսային եկամուտ, ՀՀ դրամ

8,2 մլրդ

↑ +7.8% տարեկան

ROA %

0.7 %

↓ -1.2% տ.կ. տարեկան

ROE %

2.7 %

↓ -3.4% տ.կ. տարեկան

Գործառնական ցուցանիշներ

Մասնաճյուղերի քանակ

13

Մանրածախ հաճախորդներ

298.5 հազ

↑ +47% տարեկան

Կորպորատիվ հաճախորդներ

7.6 հազ

↑ +24% տարեկան

Թողարկված քարտերի քանակ

207 հազ

↑ +46% տարեկան

ATM-ների քանակ

50

↓ -3,8% տարեկան

Վճարային տերմինալների քանակ

32

↑ +45% տարեկան

Pos տերմինալների քանակ

414

↑ +51,1% տարեկան

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները

Բանկի առաքելությունը

Լինել առաջին ընտրության բանկ մեր հաճախորդների համար՝ որպես Հայաստանի լավագույն նորարար բանկ:

Բանկի տեսլականը

Դառնալ առաջատար թվային բանկ՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

Բանկի արժեքները

Մենք նորարար ենք – Մեր առաջնային նպատակներից է հաճախորդներին որակյալ, արագ և առանց սահմանների բանկային ծառայությունների մատուցումը՝ բաց և նորարարական թվային հարթակի միջոցով:

Մենք թափանցիկ ենք – Մենք շարունակական ջանքեր ենք գործադրում, որպեսզի առավել թափանցիկ լինենք մեր հաճախորդների, ներդրողների, գործընկերների և բաժնետերերի հետ հարաբերություններում:

Մենք վստահելի ենք – Մենք կարևորում ենք մեր շահառուների տվյալների անվտանգ պահպանությունը՝ մեծ ռեսուրսներ ներդնելով դրանք կիբերհարձակումներից և այլ սպառնալիքներից պաշտպանելու համար:

Մենք հավատարիմ ենք – Մենք մեր հաճախորդների կողքին կլինենք կյանքի և՛ լավ, և՛ վատ պահերին՝ ստեղծելով հաճախորդամետ Էկոհամակարգ նրանց պահանջմունքների շուրջ:

Մենք թիմային ենք – Մենք խրախուսում ենք մեր աշխատակիցների նորարարական մոտեցումները և համոզված ենք, որ միայն թիմային ջանքերով է հնարավոր հասնել գերազանց արդյունքների:

Մեր ձեռքբերումները

Moody's



SWIFT **gpi**



INTERNATIONAL
CHAMBER
OF COMMERCE



European Bank
for Reconstruction and Development



BAFT



AMX Armenia Securities
Exchange

- ✓ **B1** - կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշ (CRRs)
- ✓ **B2** - տեղական արժույթով և արտարժույթով ներդրվող ավանդների երկարաժամկետ վարկանիշ

IDBank-ը առաջին հայկական բանկերից մեկն է, որն առաջարկում է **SWIFT global payment innovation (gpi)** ծառայություններ:

IDBank-ը առաջին հայկական բանկն է, որը պաշտոնապես միացել է Առևտրի Միջազգային Պալատին (ԱՄՊ):

Բանկը ստացել է ԶՎԵԲ մրցանակը՝ ԶՎԵԲ առևտրի ֆինանսավորման էքսպերտի ոլորտում

Բանկը միացել է ֆինանսների և առևտրի բանկային միությանը (**BAFT**)՝ միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում:

BSI-ի կողմից Բանկին շնորհվել է Տեղեկատվական անվտանգության կառավարման միջազգային համապատասխանության վկայագիր **ISO/IEC 27001:2013**

Բանկը BSI-ի կողմից ստացել է Որակի կառավարման համակարգի վկայագիր **ISO 9001:2015**

Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել են AMX-ում և ներառված են պարտատոմսերի հիմնական Abond ցուցակում

Բանկը որպես հաշվետու թողարկող

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:



IDBank-ի պարտատոմսերը ընդգրկվել են պարտատոմսերի հիմնական (Abond) հարթակում

2020 թվականի ընթացքում «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում ցուցակվել են IDBank-ի՝ 2019 թվականի 2-րդ թողարկման, ինչպես նաև 2020 թվականի 1-ին և 2-րդ թողարկումների պարտատոմսերը: Նշված բոլոր թողարկումների պարտատոմսերը ընդգրկվել են պարտատոմսերի հիմնական (Abond) հարթակում:

2019 թվականի 2-րդ թողարկման պարտատոմսերը թողարկվել են 2019 թվականի նոյեմբերին՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 27 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5.0% արժեկտրոնային տոկոսադրույքով:

2020 թվականի 1-ին թողարկման պարտատոմսերը թողարկվել են 2020 թվականի հուլիսին՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 27 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 4.75% արժեկտրոնային եկամտաբերությամբ:

2020 թվականի 2-րդ թողարկման պարտատոմսերը թողարկվել են 2020 թվականի օգոստոսին՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 27 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 4.75% արժեկտրոնային եկամտաբերությամբ:

Արդյունքում 2020 թվականի վերջի դրությամբ երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 6 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 25 մլն ԱՄՆ դոլար և 250 մլն ՀՀ դրամ:

IDBank-ի կողմից թողարկված պարտատոմսերը սովորաբար մեծ պահանջարկ են վայելում, ինչը վկայում է Բանկի նկատմամբ վստահության բարձր մակարդակի մասին: IDBank-ը նախատեսում է շարունակել պարտատոմսերի շուկայում իր ակտիվ գործունեությունը՝ հաճախորդներին տրամադրելով շահավետ ներդրումներ իրականացնելու հնարավորություններ:

Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝

- ✓ Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժույթային ռիսկ և այլն),
- ✓ Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
- ✓ Գնաճի ռիսկ

31/12/2020թ դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:



2

Ռազմավարական հաշվետվություն

Խորհրդի նախագահի ուղերձ	10
Գործադիր տնօրենի ուղերձ	11
ՀՀ տնտեսությունը	12
Մեր ռազմավարությունը և արդյունքները	14
Ֆինանսական արդյունքներ	20
Մեր անձնակազմը	23

Խորհրդի նախագահի ուղերձ



Վարդան Դիվանյան

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

Ծնվել է 1971թ. հուլիսի 24-ին:

1994թ. ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը:

2010թ. ավարտել է «Սկոլկովո» Մոսկվայի կառավարման դպրոցը, Executive MBA:

2008թ. նշանակվել է «ԲԻՆԲԱՆԿ» ԲԲԸ նախագահ:

2011թ.-ից աշխատում է «Ակսենչեր» ընկերությունում որպես կառավարիչ-տնօրեն «Ֆինանսական ծառայություններ» գործառնական խմբում:

Ներկայումս հանդիսանում է «Ակսենչեր» ընկերության գործադիր տնօրեն Ռուսաստանում և Ղազախստանում:

2016թ-ին նշանակվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ:

Չարգելի՝ ներդրողներ և հաճախորդներ,

2020 թվականը մեր հայրենիքի համար ծանր տարի էր: Նախ և առաջ, որպես ազգային հոգեւոր ու խնդիրներով ապրող մարդ, ցավակցությունս եմ բերում հայրենիքի պաշտպանության համար զոհված մեր հայրենակիցների հարազատներին: Մեր հերոսների նվիրումն ու զոհողությունը գնահատելու և արժևորելու միակ ճիշտ ուղին այսուհետ պետք է հզոր Հայաստան կառուցել լինի: Պարտավոր ենք ներդնել հնարավոր բոլոր ջանքերը համազգային խնդիրների հաղթահարման և առաջ շարժվելու համար:

Չմոռանալ, որ 2020 թվականը նաև չափազանց ծանր տարի էր ամբողջ աշխարհում համավարակի հետևանքով տնտեսության անկման և անդրոշության պատճառներով:

Ենթաժամային իրավիճակում անտեսելով ֆինանսական զգալի կորուստներն ու ստորադասելով բիզնեսի շահը հասարակության շահին՝ IDBank-ը 2020 թվականի ընթացքում իրականացրեց մի շարք միջոցառումներ՝ վարկային արձակուրդ տրամադրելով համավարակից տուժած և պատերազմական գործողությունների մասնակից մեր հայրենակիցներին ու բիզնեսներին: Պատերազմի ընթացքում և դրանից հետո բարեգործական խոշոր նախաձեռնություններով հանդես եկանք՝ օգնելու մեր երկրին ու հայրենակիցներին անցնել բոլորիս հայտնի փորձությունների միջով:

2020 թվականն իսկական փորձություն էր թվային ծառայություններ առաջարկող ընկերությունների համար, որը IDBank-ը հաղթահարեց պատվով ու բավականին լուրջ առաջընթաց գրանցեց թե՛ հաճախորդների աճի, թե՛ հեռավոր ծառայությունների ֆունկցիոնալի տեսանկյունից: Մենք ևս մեկ անգամ հնարավորություն ունեցանք համոզվել, որ տարիներ առաջ որոշեցրած ռազմավարությունը միանշանակ ճիշտ էր: Այսօր վստահորեն կարող եմ ասել, որ մեր բոլորի ջանքերը ուղղված ամբողջական թվային ծառայությունների զարգացմանը և հաճախորդների փորձառության բարելավմանը տալիս են փայլուն արդյունքներ, և մենք պատվով անցանք այս լրջագույն ընկերությունը: Այսօր մեր թվային հարթակը հաճախորդներին տրամադրում է ծառայությունների ամենալայն շրջանակ՝ շեշտը դնելով համաշխարհային միտումների վրա ու հարմարեցնելով դրանք հայաստանյան շուկային: Նպատակը մեկն է՝ ապահովել հաճախորդին հարմար ու արդյունավետ սպասարկման գործիքակազմով, ընդ որում, դա անել ինչպես թվային աշխարհում, այնպես էլ ֆիզիկական սպասարկման ոլորտում. մենք շարունակում ենք մասնաճյուղերի վերազինման և մոդեռնիզացման գործընթացը, որպեսզի մեր հաճախորդը ստանա ոչ միայն որակյալ հեռավոր ծառայություններ, այլ նաև հաճությամբ սպասարկվի մասնաճյուղերում և ինչպիսիք է թանկ ժամանակը:

Ուրախ եմ փաստել, որ անգամ սթրեսային ու մարտահրավերներով լի 2020-ի ընթացքում մենք ոչ միայն հաճախորդների բազայի զգալի աճ ենք արձանագրել, այլ նաև հասել ենք նրանց գոհունակության ցուցանիշի ետևան բարելավմանը:

Ու չնայած բոլոր կանխատեսումներով 2021 թվականը լինելու է ենթաժամի հաղթահարման դժվարին տարի, համոզված եմ, որ մեր ընտրած թվային ռազմավարությունը, հաճախորդամետ մոտեցումն ու համաշխարհային միտումների ճիշտ գնահատումը հնարավորություն են տալու մեզ առաջ շարժվել մեր նորարար, տեխնոլոգիական ճանապարհով: Ավելին, 2021-ին շարունակելու ենք մեր նպատակային համագործակցությունը արտասահմանյան ֆինանսական ընկերությունների հետ՝ մեր հաճախորդներին նաև Հայաստանից դուրս հնարավորություն տալով օգտվել լիարժեք միջազգային ֆինտեխ էկոհամակարգից:

Շնորհակալություն եմ հայտնում թե՛ տեղական, թե՛ միջազգային գործընկերներին, մեր թիմակիցներին ու, իհարկե, հաճախորդներին մեզ վստահելու և մեզ հետ համընթաց բայելու համար:

**Խորհրդի նախագահ
Վարդան Դիվանյան**

Վարչության նախագահի ուղերձը



Միեր Աբրահամյան
Վարչության նախագահ

Ծնվել է 1975թ. հոկտեմբերի 16-ին:

1997թ. ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի Կառավարման և տնտեսական կապերի ֆակուլտետը:

2004թ. ավարտել է ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլետչերի իրավունքի և Դիվանագիտության դպրոցը: Ունի CFA I, II մակարդակների որակավորում:

1999թ.-ից աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում, 2007–2012թթ.՝ որպես ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության Բանկային համակարգի կարգավորման բաժնի ղեկավար, 2012 – 2018 թթ.՝ ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետ:

2019թ. նշանակվել է IDBank-ի Վարչության նախագահ:

Հարգելի գործընկերներ, հաճախորդներ և բաժնետերեր,

2020-ը մեր երկրի համար վերադարձումն էր ու իրողություններին նորովի նայելու տարի էր: Այն փորձությունները, որոնք բաժին հասան մեր ազգին, չշրջանցեցին որևէ մեկին ու որևէ ոլորտ:

Տարվա հենց սկզբում, երբ համավարակը բերեց համաշխարհային լուրջում, IDBank-ը Հայաստանի եզակի բանկերից մեկն էր, որ իր ռազմավարական գործընկեր Իդրամ ընկերության հետ համատեղ իր հաճախորդներին առաջարկեց հեռավար սպասարկման թվային ամբողջական գործիքակազմ սկսած Բանկի հաճախորդ դառնալուց մինչև ամենատարբեր ծառայությունների դիմաց անհպում վճարումների ապահովում: Այդ ոչ այնքան դյուրին ժամանակահատվածում ոչ միայն ապահովվեց Բանկի անխափան աշխատանքը, այլ նաև մեծ ներդրումներ իրականացվեցին թվային ուղիների կատարելագործման մեջ՝ հաճախորդներին լավագույն փորձառություն առաջարկելու համար:

Հաշվի առնելով առկա պահանջները և հավատարմի մեր տեսլականին՝ ամեն ինչ հաճախորդի շուրջ և հաճախորդի համար, չնայած համավարակին ու պատերազմին, մենք ևս մեկ մասնաճյուղ հանձնեցինք հաճախորդների դատին շարունակելով սպասարկման նորարար, ժամանակակից լուծումներով հազեցած մասնաճյուղերի շարքը: Ինչպես նոր՝ Շենգակիթ, այնպես էլ Բանկի մյուս մասնաճյուղերում հաճախորդները կարող են ստանալ ծառայություններ՝ միաժամանակ վայելելով ջերմ, ոչ այնքան բանկային մթնոլորտն ու բարձրակարգ սպասարկումը:

2020 թվականի աղետալի իրադարձություններն, այնուամենայնիվ, չէին կարող չանդրադառնալ Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա. ունենք զուտ շահույթի թերակատարում, որը պայմանավորված էր իմնականում ծախսերի ավելացմամբ՝ կապված հայտնի մարտահրավերների և անիրաժեշտ ներդրումների հետ: Ու չնայած դրան՝ 2020-ի ընթացքում գեներացված հասույթը սահմանված պլանից քիչ է տարբերվում:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ թվային հարթակներում ունենք հաճախորդների ակտիվության զգալի աճ. մասնավորապես աճել է ինչպես թվային հարթակներում գրանցված հաճախորդների, այնպես էլ թվային հարթակներում ակտիվ հաճախորդների թիվը՝ նախորդ տարվա համեմատությամբ ապահովվելով համապատասխանաբար մոտ 400% և 370% աճ: Աճել է նաև հաճախորդների գոհունակությունը, ինչը հերթական հուշումն է, որ չնայած բոլոր դժվարություններին՝ Բանկը հստակ շարժվում է իր որդեգրած քաղաքականության ու ռազմավարությանը համապատասխան:

2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմի մեկնարկի պահից և հետպատերազմյան շրջանում IDBank-ը, դրսևորելով սոցիալական բարձր պատասխանատվություն, իրականացրել է բարեգործական մի շարք միջոցառումներ: 250 մլն ՀՀ դրամից ավելի ուղիղ դրամական աջակցություն է ցուցաբերվել «Հայաստան» համահայկական հիմնադրամին, Հինձառայողների ապահովագրության և մի շարք այլ հիմնադրամներին: Բացի այդ՝ Բանկի և «Իդրամ» ընկերության համատեղ «Սի դրամի ուժը» ԿՄՊ ծրագրի շրջանակում ավելի քան 18 մլն ՀՀ դրամ է փոխանցվել ուղղված նախ՝ կորոնավիրուսի հետևանքների, այնուհետև նաև՝ պատերազմական գործողությունների արդյունքում առաջացած դժվարությունների հաղթահարմանը:

Պատերազմին մասնակից մեր բոլոր հաճախորդներին Բանկը ցուցաբերել է անհատական մոտեցում՝ տրամադրելով վարկային արձակուրդ, սրբագրելով կուտակված տույժերն ու տուգանքները, իսկ զոհված զինծառայողների դեպքում՝ իրականացնելով վարկային պարտավորության ամբողջական մարում:

Բարեգործական մի շարք նախաձեռնություններով է հանդես եկել նաև Բանկի թիմը, ինչը ևս մեկ անգամ հաստատում է, որ IDBank-ում աշխատում են ոչ միայն իրենց գործի նվիրյալներ ու պրոֆեսիոնալներ, այլ նաև հայրենասեր ու հասարակության խնդիրներով ապրող մարդիկ:


Հպարտությամբ ու վստահությամբ կարող եմ նշել, որ այն թիմն ու գործելաճոհ, որով IDBank-ը շարժվում է առաջ, հնարավորություն են տալու հաղթահարելու ճգնաժամային 2020 թվականի հետևանքներն ու մեր հաճախորդներին ապահովել ինչպես թվային, այնպես էլ դասական բարձրակարգ սպասարկմամբ:

Մենք շարունակում ենք ներդնել անիրաժեշտ մարդկային, ֆինանսական ռեսուրսներ, նորարար գործիքակազմ մեր ռազմավարական նպատակների իրագործման ու հաճախորդներին լավագույն փորձառություն առաջարկելու համար:

Վարչության նախագահ
Միեր Աբրահամյան


ՀՀ տնտեսություն

Տնտեսական ակտիվության ցուցանիշ




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Միջին տարեկան փոխարժեքներ




Աղբյուր՝ ՀՀ ԿՔ

ՀՆԱ ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


Գնաճ (տարեկան կտրվածքով, ժամանակահատվածի վերջ,%)




Աղբյուր՝ ՀՀ ԿՔ

Ֆինանսական համակարգ


Բանկերի ակտիվների և վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին




1 տարուց ավելի ժամկետայնությամբ ավանդների միջին տոկոսադրույք



Բանկային ավանդներ և վարկեր, մլրդ ՀՀ դրամ



1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի միջին տոկոսադրույք





Մեր ռազմավարությունը և արդյունքները



Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման տնօրեն

Ծնվել է 1976թ. մարտի 30-ին:

2001թ. ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան Պետական Համալսարանի Մեխանիկական-Մաթեմատիկական ֆակուլտետի «Ֆինանսական և ակտուար մաթեմատիկա» բաժինը:

Ունի ավելի քան 20 տարվա միջազգային աշխատանքային փորձ ֆինանսական և ներդրումային ոլորտներում:

2016 թվականին միացել է IDBank-ի թիմին: Ներկայումս հանդիսանում է IDBank-ի Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ:

Մեր հիմնական նպատակն է հաճախորդներին տրամադրել արագ, հարմարավետ և ապահով ծառայություններ՝ ցանկացած վայրում և ցանկացած ժամի: Այդ նպատակով մենք մշտապես ընդլայնում ենք մեր ծառայությունների շրջանակը, ստեղծում նոր և էլ ավելի հարմարավետ հնարավորություններ մեր հաճախորդների համար, և, իհարկե, բարելավում ենք գործող հնարավորությունները:

Չնայած 2020 թվականը ֆորսմաժորային էր Հայաստանի համար, այնուամենայնիվ, մեզ հաջողվեց իրագործել մի շարք ռազմավարական ծրագրեր և նպաստել մեր հաճախորդների անվտանգ և ապահով գործունեությանը:

2020 թվականի ընթացքում մեզ հաջողվել է բացել 2 նոր մասնաճյուղ՝ ներդնելով բանկային նոր մշակույթ, առաջարկելով հետաքրքիր ու նորարարական լուծումներ, մրցունակ բանկային ծառայություններ և հարմարավետ սպասարկում:

Մենք շարունակաբար ընդլայնում ենք մեր գործընկերների ցանկը՝ մեր հաճախորդներին ապահովելով անհպում և անվտանգ վճարումներ իրականացնելու լայն գործիքակազմով: Ստեղծում ենք այնպիսի թվային, նորարար գործիքներ, որոնց միջոցով մեր հաճախորդները հնարավորություն կունենան կառավարել իրենց ֆինանսները ցանկացած վայրում և ցանկացած ժամի:

2020 թվականի արդյունքներով մեզ հաջողվել է ամրագրել նաև Բանկի գործունեությունից հաճախորդների գոհունակության մակարդակի բարձրացում, ինչը համարում ենք մեր աշխատանքի լավագույն գնահատականը և անում ենք առավելագույնը՝ մեր հաճախորդների սպասարկումը էլ ավելի հարմարավետ, իսկ մեր կողմից առաջարկվող ծառայությունները էլ ավելի մրցունակ դարձնելու համար:

Մեր հաճախորդները

Բանկի կողմից մատուցվող ծառայություններից հնարավորինս հարմարավետ օգտվելու նպատակով Բանկն այժմ առաջարկում է հետևյալ հիմնական ուղիները.



Րազմաֆունկցիոնալ ինտերնետ և մոբայլ բանկինգ



Նորարարական և հարմարավետ մասնաճյուղեր



24/7 ինքնապատրաստման գոտիներ



24/7 հեռախոսազանգերի կենտրոն

Կորպորատիվ հաճախորդներ



~ 7.6 հազ հաճախորդ

+24% տարեկան

2020 թվականի վերջի դրությամբ Բանկի կորպորատիվ հաճախորդների թիվը շուրջ 7,600 է: Բանկը շարունակաբար զարգացնում է գործընկերային հարաբերությունները տարբեր ոլորտներում՝ գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ՝ առաջարկելով հարմարավետ պայմաններ ֆինանսական խնդիրների լուծման համար:

- Ներդրվել և զարգացվում են ՓՄՁ-ների համար նախատեսված փաթեթային ծառայություններ:
- Ներդրվել և պարբերաբար նոր ու առավել հարմարավետ հնարավորություններով թարմացվում է ՓՄՁ-ների համար նախատեսված մոբայլ բանկինգը:
- Ներդրվել է Էներգաարդյունավետությանը նպաստող վարկային պրոդուկտ, որի միջոցով ֆինանսավորվելով՝ մեր գործընկերները կկարողանան ծավալել իրենց գործունեությունը՝ միաժամանակ լուծելով արդիական խնդիրներ:
- Բանկը համագործակցելով տարբեր կազմակերպությունների հետ, մշտապես փորձում է առաջարկել իր հաճախորդներին էլ ավելի հարմարավետ ծառայություններ: «Արմիդինգ» ընկերության հետ համագործակցության արդյունքում Բանկի հաճախորդները հնարավորություն ունեն օգտվել մասնագիտացված փոխհաշիվի ծառայություններից:

Մանրածախ հաճախորդներ



~ 298.5 հազ հաճախորդ

+47% տարեկան

2020 թվականի վերջի դրությամբ Բանկի մանրածախ հաճախորդների թիվը շուրջ 298,500 է: Բանկը մշտապես զարգացնում է իր գործող ծառայությունները, մշակում և ներդնում է նորը՝ հաճախորդներին առաջարկելով լավագույն լուծումները:

- Այսուհետ հաճախորդները հնարավորություն ունեն իրենց վճարումները կատարել Rocket Line նախապես հաստատված սահմանաչափի միջոցով և կառավարել իրենց ֆինանսական հոսքերը:
- Բանկը մշտապես թարմացնում է թվային ծառայությունները, առաջարկելով առավել հարմարավետ լուծումներ: Հաճախորդները այսուհետ կարող են րոպեների ընթացքում ստանալ փոխանցումներ Ռուսաստանից IDPay հավելվածի միջոցով:
- Բանկը գիտակցում է հաճախորդների բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը և առաջարկում է մրցակցային պայմաններով վարկատեսակներ, արդյունքում՝ 2020 թվականի ընթացքում Բանկի հիփոթեքային վարկավորման ծավալները աճել են 46 %-ով՝ նախորդ տարվա համեմատ:

Թվային հարթակ - Wallet and Banking

Idram և IDBanking հավելվածը մեկ միասնական գործիք է բոլոր տեսակի վճարային գործարքներից, փոխանցումներից և այլ ֆինանսական ծառայություններից օգտվելու համար, այն ամբողջովին բացառում է բանկի հաճախելու, կանխիկի հետ շփվելու և անձնական ֆինանսների կառավարման գործընթացում ֆիզիկապես ներգրավված լինելու անհրաժեշտությունը:



IDBanking




Չեռախար Նույնականացում



QR և NFC տեխնոլոգիաներով արագ և հեշտ վճարումներ



IDBank-ի բանկային բարտերը հավելվածով պատվիրելու հնարավորություն



Rocket Line – Չնի՛ր հիմա, վճարի՛ր հետո



Արագ փոխանցումներ Idpay հավելվածի միջոցով

Ոչ ֆինանսական արդյունքներ

IDBank-ը Հյուսիսային 6 հասցեում բացել է իր ֆլագմանյան գրասենյակը



IDBank-ն իր նոր մասնաճյուղով բանկային նոր մշակույթ է ներդրել: Բանկի նոր ֆլագմանյան գրասենյակը իր տեսակի մեջ միակն է տարածաշրջանում. այստեղ մեկտեղված են մի շարք ծառայություններ, որոնք հաճախորդները հաճախ ստիպված են լինում փնտրել տարբեր վայրերում:

Երևանի սրտում գտնվող գրասենյակում այսուհետ կարելի է կատարել բանկային գործառնություններ, օգտվել Privilege banking-ի ծառայություններից, ստանալ իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հատուկ առանձնացված սրահում, CoffeeShop Company-ի Espresso It սրճարանում վայելել իսկական սուրճ կամ համոտեսել համեղ ուտեստներ, իսկ անհրաժեշտության դեպքում աշխատել coworking-ում:

Օնլայն Ռոբոթ Վարկ՝ հրթիռային արագությամբ



IDBank-ը գործարկել է «Ռոբոթ վարկ» ծառայությունը, որը հնարավորություն կտա առանց տնից դուրս գալու հրթիռային արագությամբ ստանալ մինչև 5 մլն ՀՀ դրամ վարկ: Ծառայությունը հասանելի է ինչպես IDBanking.am առցանց հարթակի, այնպես էլ Idram հավելվածի միջոցով: Ցանկացած պահի ցանկացած վայրից անհրաժեշտ է ընդամենը կատարել մի բանի պարզ բայց, և վարկի գումարը կլինի հաճախորդի հաշվի՝ առանց որևէ թաքնված միջնորդավճարի:

IDBank-ն առաջինը Հայաստանում ներկայացրեց Visa Signature պրեմիում դասի բարտը

IDBank-ի նոր ֆլագմանյան մասնաճյուղի բացման հանդիսավոր արարողությունն ավարտվել է Հայաստանի համար նոր՝ Visa Signature պրեմիում բարտի շնորհանդեսով:



Քարտը հնարավորություն է տալիս քարտապանին ստանալ պրեմիում դասի անհատական սպասարկում և օգտվել առաջարկվող մի շարք արտոնություններից՝ Cashback անկանխիկ գնումներից, բարձր եկամուտ դեբետային քարտի դրական մնացորդին, վարկային գիծ ունենալու հնարավորություն, զեղչ Idworking-ի ծառայություններից օգտվելու համար:

Visa Signature քարտը տալիս է նաև օդանավակայանների պրեմիում սրահներ անվճար մուտքի հնարավորություն, Lounge Key, 24/7 Կոնսիերժ ծառայություն, ճանապարհորդական ապահովագրություն, բժշկական աջակցություն, հատուկ պրեմիում դասի զեղչեր, արտոնյալ առաջարկներ ամբողջ աշխարհում և շատ այլ առավելություններ:

Համագործակցություն IDBank-ի և «Արմիզինգ»-ի միջև



IDBank-ն ու «Արմենիան Լիզինգ Քամինին» համագործակցության պայմանագիր են ստորագրել, որով

1. «Արմիզինգը» կմատուցի մասնագիտացված լիզինգային ծառայություններ IDBank-ի կողմից առաջարկվող հաճախորդներին:

2. «Արմիզինգը» կիրականացնի լիզինգային գործարքների ֆինանսավորումը ինչպես սեփական միջոցներով, այնպես էլ կստանա ֆինանսական միջոցներ IDBank-ից՝ իրականացվող նախագծերի ֆինանսավորման համար:

3. Կիրականացվեն ֆինանսավորման նախագծեր, որոնք կմեկտեղեն երկու ընկերությունների ուժերը կողմերը շուկայում հաճախորդներին համաֆինանսավորման սկզբունքով տրամադրելով նաև հատուկ առաջարկներ:

4. Արմիզինգի հաճախորդները IDBank-ում կսպասարկվեն անհատական պայմաններով:

Ոչ ֆինանսական արդյունքներ

«Էներջի» վարկ IDBank-ից՝ ՓՄՁ-ներին



IDBank-ը կնպաստի Էներգաարդյունավետության բարձրացմանն ու այլընտրանքային Էներգիայի օգտագործման հնարավորությունների ընդլայնմանը: «Էներջի» վարկով ՓՄՁ-ները հնարավորություն կունենան ստանալ մինչև 500 մլն ՀՀ դրամ, իսկ առանձին դեպքերում նաև՝ մինչև 1 մլրդ ՀՀ դրամ վարկային միջոցներ, որոնք կարող են ուղղվել արդիական Էներգաարդյունավետ սարքավորումների և մեքենաների ձեռքբերմանը, ենթակառուցվածքների կառուցմանը և ներդրվել այն նախագծերի մեջ, որոնք օգտագործում են վերականգնվող Էներգիայի աղբյուրներ:

Մտաչելի փոխանցումներ Ռուսաստանից Հայաստան



IDBank-ը ռուսական «Վճարային Ունիվերսալ տեխնոլոգիաներ» (Универсальные платёжные технологии) ընկերության հետ համատեղ հայտարարում է IDpay նախագծի մեկնարկի մասին: IDpay-ը բջջային հավելված է, որը թույլ է տալիս կցել VISA, Mastercard և МИР համակարգերի ռուսաստանյան ցանկացած բանկի քարտ և իրականացնել IDBank-ի հաճախորդների քարտերի/ հաշիվների ակնթարթային համալրում հեռախոսահամարով: Այս պահին փոխանցումներն իրականացվում են ռուբլով:

IDpay բջջային հավելվածի միջոցով IDBank-ի հաճախորդին դրամական ակնթարթային փոխանցում իրականացնելու համար անհրաժեշտ է հասցեագրեցնել ընտրել կամ ձեռքով մուտքագրել ստացողի բջջային այն հեռախոսահամարը, որը կցված է IDBank-ի քարտին կամ հաշվին: Գործարքը տևում է վայրկյաններ. ավելի արագ, քան հեռախոսազանգը:

ՌՈՔԵԹ ԼԱՅՆ – Ստացի՛ր հիմա, վճարի՛ր հետո



IDBank-ն ու Idram-ը առաջարկում են համատեղ հեղափոխական թվային գործիք անհպում և առցանց գնումների ոլորտում: Rocket line-ի միջոցով հնարավոր է գնումից հետո վճարել 1,2,3 կամ 6 ամիս անց: Rocket line-ը հնարավորություն է տալիս Idram-ի և IDBank-ի հաճախորդներին առանց որևէ ջանք թափելու Idram հավելվածում և IDBanking.am առցանց հարթակում ունենալ իրենց անձնական սահմանաչափը, որը կարելի է օգտագործել սկսած 3000 դրամ գնումների/վճարումների համար՝ ամբողջովին կամ մաս-մաս:

Idram--ով վճարման հնարավորություն ունեցող բազմաթիվ վաճառակետերում կարելի է օգտվել «Rocket line 0% - Գնի՛ր հիմա, վճարի՛ր հետո» ծառայությունից:

Բացվել է IDBank-ի «Շենգավիթ» մասնաճյուղը




IDBank-ն արդեն մասնաճյուղ ունի նաև Շենգավիթում. այն հազցած է ժամանակակից սպասարկման համար նախատեսված լավագույն տեխնոլոգիական լուծումներով և առանձնանում է սրահի յուրահատուկ ու նորաոճ ձևավորմամբ: Շենգավիթի մասնաճյուղում գործում է նաև IDBanking 24/7 սպասարկման գոտի, որով շաբաթական 7 օր, 24 ժամ կարելի է օգտվել 250-ից ավելի ծառայություններից՝ կանխիկ մուտքագրում/ելքագրում, հաշիվների համալրում, կոմունալ վճարումներ և այլն:

«Շենգավիթ» մասնաճյուղը գտնվում է Բազրատունյաց 13 հասցեում. այն IDBank-ի 13-րդ մասնաճյուղն է Հայաստանում. Բանկը մասնաճյուղեր ունի Երևանում, Վանաձորում, Գյումրիում, Էջմիածնում և Արթուրյանում:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, հասարակայնության հետ կապեր

Չնայած երկրում ստեղծված համաճարակային և պատերազմական իրավիճակին՝ Բանկին հաջողվել է իրագործել ռազմավարությամբ սահմանված նպատակները և ծրագրերը, ինչպես նաև տարվա ընթացքում իրականացնել բազմաթիվ նախագծեր սոցիալական պատասխանատվության շրջանակներում:

«Կառուցի՜ր կարիերադ IDBank-ի հետ» ուսումնական ծրագիր



Բանկը, կարևորելով երիտասարդ սերնդի համար նոր հնարավորությունների ստեղծումը, որոշել է լուծել այս խնդիրը գոնե մի խումբ ուսանողների համար և հնարավորություն տալ նրանց բանկի միջոցներով մասնակցել դասընթացների, իսկ այնուհետև՝ նաև աշխատել բանկում:

Զանի որ Բանկի ռազմավարական նպատակներից մեկը սպասարկման որակի բարելավումն է և հաճախորդներին անհատական մոտեցումների տրամադրումը, ընտրվել են այնպիսի ուսանողներ, ովքեր պատրաստ են կարիերան սկսել հենց այդ կարևորագույն ջղակից:

IDBank-ն ընդառաջել է իր վարկառուների



Հաշվի առնելով նոր կորոնավիրուսի տարածմամբ երկրում ստեղծված իրավիճակն ու հոգ տանելով հաճախորդների մասին՝ IDBank-ը որոշում է կայացրել ընդառաջել իր վարկառուներին:

Ֆիզիկական անձ հաճախորդները հնարավորություն են ստացել որոշակի ժամանակահատվածում վարկային մարումներն իրականացնել իրենց հարմար ժամանակ, իսկ այդ ընթացքում վարկային պարտավորությունների չկատարման դեպքում վարկառուի նկատմամբ տույժ և տուգանք չի կիրառվել, վարկը չի դասակարգվել և վարկառուի վարկային պատմությունը չի տուժել:

Կենսաթոշակառուներն իրենց քարտերը կստանան անվճար առաքմամբ



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորոնավիրուսային վարակը հատկապես վտանգավոր է տարեցների համար՝ կենսաթոշակառուներն այլևս ստիպված չեն լինի այցելել Բանկ իրենց կենսաթոշակային քարտերը ստանալու համար:

Կենսաթոշակառուների քարտերը ՀՀ ամբողջ տարածքում կառաքվեն անվճար և քարտապաններին կհանձնվեն՝ պահպանելով անվտանգության բոլոր նորմերն ու առողջապահության նախարարության ցուցումները:

IDBank-ն ու Idram-ը 100 մլն դրամ են փոխանցել «Հայաստան» համահայկական հիմնադրամին



IDBank-ն ու Idram-ը միացել են «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» համագալսյին դրամահավաքին և 100 մլն ՀՀ դրամ են փոխանցել «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

Idram հավելվածի միջոցով հաճախորդները ևս կարող են ներդրում ունենալ «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» համահայկական դրամահավաքին:

IDBank-ը միացել է «1 դրամի ուժը» նախաձեռնությանը



IDBank-ն Idram ընկերության «Մի դրամի ուժը» նախաձեռնության ռազմավարական գործընկերն է: Այսուհետ նաև IDBanking.am առցանց հարթակի և IDBank-ի տեղմիջանցների միջոցով ցանկացած վճարումից 1 դրամ կփոխանցվի «Մի դրամի ուժը» նախաձեռնությանը:

Մինչև տարեվերջ «Մի դրամի ուժը» նախաձեռնության շնորհիվ հնարավոր դարձավ կուտակել մոտ 18 մլն դրամ, որը հիմնականում ուղղվել է Համահայկական հիմնադրամին՝ ի աջակցություն Արցախին, Չինծառայողների ապահովագրության հիմնադրամին, ինչպես նաև Տավուշի և Լոռու սահմանամերձ գոտիների աշակերտների կրթությանը:



Ֆինանսական արդյունքներ



Արման Ասատրյան Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ

Ծնվել է 1977թ. հունվարի 16-ին: Ավարտել է Երևանի Պետական Տնտեսագիտական Ինստիտուտի «Ընդամուր տնտեսագիտություն» ֆակուլտետը «Համաշխարհային էկոնոմիկա» մասնագիտությամբ:

2017 թվականին նշանակվել է «Այդի Բանկ» ՓԲԸ Գործառնական տնօրեն, Վարչության անդամ:

Ներկայումս հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ:

Ունի 23 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական համակարգում:

2020 թվականը ծանր ժամանակաշրջան էր Հայաստանի համար, ինչը չէր կարող իր ազդեցությունը չունենալ Նաև Բանկի գործունեության և ֆինանսական արդյունքների վրա:

Ամփոփելով Բանկի ֆինանսական արդյունքները 2020 թվականի ընթացքում՝ կարող ենք նշել, որ չնայած երկրի ճգնաժամային իրավիճակին Բանկին հաջողվել է գեներացնել շուրջ 1,2 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ:

2020 թվականի ընթացքում ստացված զուտ շահույթի մասով ունենք որոշակի թերակատարում մեր կողմից սահմանված պլանի համեմատությամբ, որը պայմանավորված էր հիմնականում ծախսերի ավելացմամբ՝ կապված հայտնի մարտահրավերների և անիրաժեշտ ներդրումների հետ: Սակայն 2020-ի ընթացքում գեներացված հասույթը սահմանված պլանից քիչ է տարբերվում: Բանկին հաջողվել է գրանցել Նաև ակտիվների աճ 18%-ի չափով, վարկային պորտֆելի աճ 22%-ի չափով:


Վերլուծելով ֆինանսական կայունության ցուցանիշները՝ կարող ենք արձանագրել, որ Բանկն ապահովել է կապիտալի համարժեքության և Բանկի իրացվելիության ընդհանուր և ընթացիկ մակարդակների բարձր ցուցանիշներ, ինչը խոսում է Բանկի կայունության և հետագա գործունեության համար լայն հնարավորությունների մասին:

